Դիմելու կարգ

«Արդյունաբերական և համակարգային ինժիներություն» պիլոտային

մագիստրոսական ծրագրի

1	Ծրագրին դիմելու նախապայմաններ և չափորոշիչներ	Ծրագրին կարող են դիմել Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների և էլեկտրոնիկայի ինստիտուտի առաջին և երկրորդ կուրսի առկա մագիստրոսական կրթական ծրագրով ուսանող այն անձիք, ում ՄՈԳ-ը կազմում է 80 և ավելի: Դիմորդները պետք է ներկայացնեն՝ • On-line լրացված դիմում հայտ: • ՄՈԳ-ը հաստատող տեղեկանք: Դիմորդները պետք է հանձնեն հիմնարար գիտելիքների (մաթեմատիկա և ֆիզիկա) ստուգման թեստ և անցնեն հարցազրույց:
2	Թեստավորում	Ծրագրին մասնակցության դիմում-հայտ ներկայացրած անձիք պետք է հանձնեն հիմնարար գիտելիքների (մաթեմատիկա և ֆիզիկա) ստուգման թեստ: Թեստավորման իրականացման ձևաչափը՝ գրավոր: Թեստավորման դրական նվազագույն շեմը՝ 8 միավոր, առավելագույնը՝ 20: Թեստավորումը կիրականացվի համապատասխան մասնագետներից կազմված հանձնաժողովի կողմից:
3	Հարցազրույց	Ծրագրին մասնակցության դիմում-հայտ ներկայացրած և թեստավորումից դրական միավոր ստացած անձիք պետք է անցնեն հարցազրույց: Հարցազրույցը կիրականացվի համապատասխան հանձնաժողովի կողմից, որը կունենա նաև ընտրություն կատարելու գործառույթ: Ընտրական հանձնաժողովը կազմված կլինի համալսարանի և ծրագրի համագործակից ընկերությունների ներկայացուցիչներից: Ընտրական հանձնաժողովի կազմ՝ 1. ՀԱՊՀ ներկայացուցիչ 2. «Արդյունաբերական և համակարգային ճարտարագիտություն» մագիստրոսական ծրագրի համակարգող 3. ՁԻՀ ներկայացուցիչ 4. Ֆիլիպ Մորիս ընկերության ներկայացուցիչ 5. Ինժիներական քաղաքի ներկայացուցիչ
4	Ծրագրի շահառուների ընտրության գործընթաց	Ծրագրի շահառու, թվով 15 լավագույն թեկնածուների ընտրությունը կկատարվի ընտրող հանձնաժողովի կողմից՝ դիմորդի կողմից ներկայացված դիմում-հայտի, ՄՈԳ-ը հաստատող տեղեկանքի, հիմնարար գիտելիքների ստուգման թեստի և հարցազրույցի արդյունքների ընդանուր ամփոփման հիման վրա: